

Արտօնատէր
Ղ. Գ. ՊԱՆԹԱՆԱՆ

Իզմիրի համար տարեկան գինն է 1
սոկի օսմանն առ : Վեցամսեայ գինն 3
արծաթ մէճիտիէ : Եռամսեայ գինն 2
մէճիտիէ :
Տասնկատանի միւս քաղաքաց հա-
մար տարեկան գինն 6 մէճիտիէ :
Վեցամսեայ * 4 »
Եռամսեայ 5 »
Օտար երկիրներու համար տարե-
կան գինն է 25 ֆրանք :
Բաժանորդագիրն կանխիկ վճարելի :
Բաժանորդագրութեան և ծանուց-
ման համար պէտք է գիտնել առ Պ.
Ի. Գերձակեան, Եօ Պէտէպօթէն, 3 :

ԱՐՇԱՆՈՅՍ

ԱՐԱՐԱՏԵԱՆ

ԵՌՈՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ ԻԶՄԻՐԻ

Համարատու—խմբագիր
Թ. Կ. ՍՎԱՃԵԱՆ

Դուքս զրկուածներուն բօսիլայի
ծախքը խմբագրութիւնը կը վճարէ :
Զհրատարակուած յօդուածի կամ
նամակի համար խմբագրութիւնը
պատասխանատուութիւն չընդունիր :
Խմբագրութեան զրկուած որ և է
զրուիթիւն կտ չըտրուիր :
Հասարակաց օգտակար գրութիւն-
ներ ձրի կը հրատարակուին :
Ծանուցման տողը մէկ անգամի
համար 5 գրուէ է, երկու անգամի
համար 2 գրուէ, և երեք անգամի
համար 1 գրուէ : Երեք անգամէն
ուսելի համար սակարկութիւն կը լրջայ :

Ուղղակի խմբագրութեան վերաբերեալ որեւէ գրութիւն պէտք է խմբագրին անունին զրկուիլ, Եօ Պէտէպօթէն, 5 :

ՍԶԴ

Նախորդ թիւով քսած էինք թէ
մեր ընթերցողաց պիտի յայտնենք
թերթին հրատարակութիւնն ու-
չացնող պատճառները : Դեռ հրա-
տարակութեան չըսկած յայտա-
բարած էինք, ինչպէս կը յիշէ
պատարժման հասարակութիւնը,
թէ շաբաթը երկու անգամ պիտի
հրատարակուի : Սակայն անյուսալի
պարագաներ վրայ հասան և սով-
պեցին զմեզ որ նոյն իսկ առաջին
թիւով ծանուցանենք թէ առժա-
մանակեայ կերպով հինգ օրն ան-
գամ մը պիտի հրատարակենք,
ինչպէս որ այդ է մեր այժմու ու-
րոշումն ալ : Իզմիրի Հայոց գրա-
կան խանդը մարելէ, կամ ճիշտն
ըսած ըլլալու համար, այդ եռան-
դը արժարձեւու հոգ չարարուելէ
ի վեր, բնական է որ դանդաղ տը-
պարանները փայլէին իրենց :
Թերթութեամբ, և գրաշարները տու-
ազէին : Ուստի մեր սկսումն ալ
բնականաբար դժուարութիւններու
հանդիպեցաւ : Թէեւ առաջին ան-
գամ բողբոջին պատրաստ կար-
ծեցինք ինքզինքնիս, երբ բաւա-
կան թերթիւններ լրացուցինք,
սակայն, մեր յուսոյ հակառակ,
տեսանք որ թերթն այժմու դիր-
քով անկարելի էր երեք օրը մէկ
անգամ հասցնել երկու գրաշարով
ինչպէս անկարելի եղաւ հոս ուրիշ
գրաշար մ'ալ գտնել, հետեւաբար
ծանուցինք թէ առ այժմ հինգ
օրը մէկ անգամ պիտի հրատա-
րակենք : Եւ բռնի այս ընթացքը
պիտի շարունակենք, մինչև որ Պո-
լիէն երրորդ գրաշար մը հասնի,
որուն համար դրած ենք արդէն
Պոլիս : Երկրորդ թիւը, թէեւ երկին
մեր խօստման չպատասխանեց որ
մը ետեւ երկնալով, սակայն իրկին
մեր կամքէն անկախ պարագայ մը
վրայ հասաւ, այս մասին դանդաղ
ալ լսեցինք, բայց մտածելով որ
վանդատորները տեղեակ չէին այդ
վերահաս պարագային, չկարծե-
ցինք որ իրաւացի ըլլային : Այդ
պարագան, չենք ուզեր այժմ, ու-
մանց անձնասիրութեան չդպրելու
համար, հասարակութեան հաղոր-
դել : Qu'on se le dise !
Առաջարկուեցաւ մեզ, որ թեր-
թին դիրքը պղտիկներէ, այդ
դժուարութեանց դիմադրելու հա-
մար, սակայն ոչ միայն վախճանք
որ հասարակութեան, և մանաւանդ
ազնիւ երիտասարդութեան ցցու-
ցած համակութիւնը կը կորու-
սենք, այլ նաև մեր սկզբուն դէմ
գտանք . . . ձեւ փոխելը : Ոչ թէ
փոքրանալ, այլ աւելի մեծնալ
արդի Արշալոյսին նպատակն է :

Այժմ թէեւ որոշ չենք գիտեր թէ
մինչև քանի թիւ պիտի տեւէ հնգ-
օրեայ հրատարակութիւնը, սա-
կայն, որչափ թիւ որ պակաս հը-
րատարակուի, այն թիւերուն փո-
խարէն տանն հինգ օրեայ, բանա-
սիրական պարունակութիւն ունե-
ցող, յաւելուած թերթ մը պիտի
տանք մեր բաժանորդաց, այնպէս
որ տարեկան չըջանն լրացման ա-
տեն հարկւր այսքան թիւ տուած
ըլլանք :

ՃՈՆ ՊՐԱՅԹԻ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Միւսիչի առաջին ջրանցին շի-
նութեան ծրագրին առնել, Անդ-
լիայի պաշտօնեայ մը չ'հաւանե-
ցաւ այդ ծրագրին, և իր ընթաց-
քը տեսնելով, Առեւտրական Մե-
նակն ալ չուզեց հանգանակու-
թեան մասնակցել : Սակայն Փրան-
սական քաղաքի ջրանցի ջրան-
ցը շինուեցաւ և այսօր անկէ անց-
նող նաւերուն երեք քառորդը
Անգլիական նաւերն են : Ի՞նչ էր
ուրեմն այս փոփոխութեան պատ-
ճառը :
Անգլիացի ժողովուրդը, որ այն-
քան կ'ընդիմանար ջրանցին փո-
րուելուն, այսօր պատրաստ է աւ-
ելող աշխարհի հետ կուրիլ, ջրան-
ցին սպառնացող որ և է վտանգի
մը առաջն առնելու համար : Մո-
տերս իսկ պատերազմ ըրինք սոսկ
այն կասկածին համար թէ ջրանցը
վտանգի ենթակայ է, և այսօր
Բրիտանական զօրքերը կը դործ-
ածուին, և Գալատիի գահին վրայ
հաստատ կեցուներու համար իշ-
խան մը որ, լրագրաց թղթակից-
ներուն նայելով, ժողովուրդին հա-
մակրութիւնը չէ ստացած և կըսուի
նաև թէ պիտի ստիպուի մեկնել
մեր զօրաց հետ, եթէ ասոր կան-
չուին Եգիպտոսէն :
Եթէ երկրորդ ջրանց մը հարկ է
չինուիլ կը պարտաւորինք Փրան-
սայի հետ կամ համաձայնօրէն և
կամ անոր հակառակ գործել : Նո-
նախամեծար կը թուի Փրանսայի
հետ համաձայնօրէն գործել : (Հա-
ւանութիւն :)

Ստուգիւ Անգլիական քաղաքա-
կանութիւնը, Փրանսայի մէջ դէ-
ղագեցութիւնը բաւականորէն
զգացումն հրաւիրեց, բայց կը յու-
սամ որ այդ զգացումը վերջէն
դէպ հետեւեալներ չ'պիտի ունե-
նայ : Վատահոլութիւն ունիմ լըրա
կրամիլի և իր պաշտօնակիցներու
նպատակին, քանզի կը պարտաւո-
րին հասկնալ լազգայնոց շահերուն
ծանրակշիւթիւնը, որք անապա-
հով են, և դիտեն նաև թէ ինչ է

երկու մեծ ազգերու մէջ եղած
համաձայնութեան կարեւորութիւնը
այնպիսի խնդրոյ մը մէջ ուր ամ-
բողջ Եւրոպա շահ ունի :
Յայտնի է որ խեղճերիս թուա-
կեր Հնդկաստանի վրայ խնդիր ե-
ղաւ, Բրիտիոյ և Ամերիկայի
պատերազմները զօրաւոր ապա-
ցոյցներուն ասոր : Ամենին չէի
կարծէր որ Ռուսիա Հնդկաստան
արշաւելու գաղափարն ունենար,
ինչպէս որ մենք երբեք չ'ենք ե-
րազած Ռուսիոյ վրայ արշաւել :
Յուսանք ուրեմն որ Սուէիշի ջը-
րանցին խնդրը պաշտ արեամբ պի-
տի վիճուի, և այս վիճաբանու-
թեան մէջ Փրանսան իր բարե-
կամ կառավարութիւն մը պիտի
նկատուի :
Սակայն, Սուէիշի ջրանցին խեղ-
դիրէն դատ, ուրիշ խնդիր մ'ալ
կայ որ նոյնպէս Փրանսայի կը պի-
լնգծովեայ ուղիի մը շինութեան
խնդիրն է այս, որ Անգլիան ցա-
մաքին պիտի կցէ : Երբ որ խեղ-
ջինութեան ծրագրոյն արուեստա-
կան և գանձային կողմերը կրնան
իր կարգադրուած համարուիլ, և
կասկած չկայ Մանչի թունէլին օգ-
տակարութեան վրայ : Այսու հան-
դերձ տարօրինակ պատրուակներ
կը յառնուին այս խնդրոյ մէջ, պատ-
րուակներ զոր երբեք մարդկային
յուսալքութեան պարտաւորող
ծրագրի մը չէ յարուցած :
Կրնեն թէ, թունէլը փորելով
աղբային անկախութիւնը վտանգի
ենթարկած պիտի ըլլանք, և բարձ-
րաստիճան զինուորականներ
բսին իսկ թէ, Փրանսայի կողմէ քանի
մը հաղար զօրքեր թունէլը իշ-
նելով ճուղը և շրջակաները կը
զրաւեն, տասը միոն տարածու-
թեան մը վրայ : Ստուգիւ լոկ են-
թագրութիւն մ'է այս, որ Պէտէ-
մի մէջ միայն եղաւ, և այս անանկ
ենթարկութիւն մ'է որմէ է կը հե-
տեի թէ, մենք որ 43 միլիոն ժո-
ղովուրդ մ'ենք, և որուն 8 միլիոնը
առնական հասակ ունի, չպիտի
կրնանք հսկել և պաշտպանել հո-
ղին մէջ տանհինգ ոտք լայնու-
թեամբ փորուած ծակ մը :
Երբեք չպիտի կրնամ համամը-
տիլ այդ բարձր իշխանութեանց
կարծիքին, իրաց առեալ իրական
պատերազմի պարագան, և կը խո-
հիմ միանգամայն, որ եթէ անցած
տարի Յուլիս 11 ին Յիւլիանգրիոյ
մէջ կարող քաղաքային պաշտօն-
եայ մը ունենայինք, տեղի չպիտի
ունենային ոչ միակողմութիւն, ոչ
հրդեհ, ոչ երեք չորս հաղար
մարդու կոտորած, և ոչ վերջա-
պէս ասոնց հետեւեալ եղող ուրիշ
աղէտներ :
Ես այն կարծիքն ունիմ թէ,

Մանչի թունէլը, երբ անգամ մը
չինուի, ամենամեծ կարեւորութիւն
պիտի ունենայ մեր երկրին, ինչ-
պէս նաև ամբողջ Եւրոպայի հա-
մար : Պիտի աւելնայ նաև Միաց-
եալ—Նահանգաց հետ ունեցած
առուուրդն : Այսպէս պէտք է
ըլլալ ամեն խոհուն մարդու կար-
ծիքը, և անձնիւր Անգլիացի մեծ
կամ ազգիկ, շահ ունի որ թու-
նէլը շինուի առանց արգելքի :
Անգլիոյ ամենամեծ շահը—ինչ-
պէս որ բաւ վերջերս լըրա ճէր-
պի—խաղաղութիւնն է, և եթէ
միշտ այն սկզբունքին հետեւէինք,
հիմայ գործաւոր դատին վիճակը
ուրիշ կերպ պիտի ըլլար :
Մեր ջանքն Եւրոպայի և Հիւ-
սիսային Ամերիկեան բոլոր ազգերը
հաստատուն, անխախտ, և տեւ-
դական միութեան մը հասցունել
մեր երկրին հետ, և այս գործին
օգնելու համար է որ այս դիտո-
ղութիւնները ըրի ձեռք, զորս կը
յուսամ որ արձագանք պիտի դը-
նեն Անգլիոյ հասարակաց կարծ-
եաց մէջ : Ուրեմն, թող Փրանսան
իր բարեկամ ազգ մը նկատուի,
նոյնպէս Փրանսայի ժողովուրդը
փափաքի Անգլիացի ժողովուրդեան
հետ ներդաշնակօրէն ապրելու :
Ամեն խնդիր դիւրաւ կը կարգադրի
երբ հաշտ և խաղաղ միտքով ձեռ-
նարկուի, սակայն ամեն խնդիր ևս
կրնայ ծանր վտանգներու տեղի
տալ, երբ անձնական կարծեաց և
ոչ թէ ազգին ամբողջութեան
կարծեաց համեմատ ձեռնարկուի :

Պ. Պրայթի կարծեաց հակա-
ռակ, Անգլիոյ բանակին գլխաւոր
հրամանատար, Բէմպրիճի դուք-
սը Մանչի ծովուն տակ շինուելիք
թունէլին բողբոջին դէմ է : Այս
մասին կազմուած յանձնաժողովոյ
յայտնած է, թէ Անգլիա իր արդի
կացութեամբ զերծ է որ և է յար-
ձակումէ և կատարեալ ապահո-
վութիւն կը վայելէ, և թէ ինչ որ
այս ապահովութիւնն անստոյգ վի-
ճակի մը ենթարկէ, Անգլիոյ հա-
մար վտանգաւոր է և անարգարա-
նալի : Ապահովութեան խնդիրն
այնքան կարեւոր է երկրին և պե-
տութեան համար, զոր պէտք չէ
ամենին ամենափոքր վտանգի մը
ենթարկել : Թունէլին շինութիւնը
վտանգ մ'է Անգլիոյ համար : Անգ-
լիոյ և Փրանսայի մէջ ընդժողովեայ
ուղի մը եղած ատեն, Անգլիա
պիտի դադրի կղզի մը ըլլալէ և
տեսակ մը ցամաք պիտի ըլլայ
սահմանադրով, և սահմանադրուի
ունեցած ատեն վտանգ ալ պիտի
ունենայ : Բէմպրիճի դուքսն այն
կարծիքն ունի, թէ երբեք վա-

ճառականական շահ մը չպիտի
կրնայ փոխարինել այն վտանգնե-
րը՝ զոր ընդժողովեայ ուղին պիտի
հրաւիրէ Անգլիոյ վրայ :
Հուսմէն Սիմստարտի ուղղուած
հեռագիր մը կիմայնէ, թէ Վա-
տիկան՝ Փրանսայի կառավարու-
թեան ուշ հրաւիրած է, Թոնքինի
մէջ Կաթոլիկ միաբնակներու բա-
պառնացող վտանգին վրայ, և թէ
Պապին իշխանութիւնը պատրաս-
տուած է այս մասին կոչում մը
ընել Անգլիոյ որ, բաւ իր կարծ-
եաց, լաւագոյն է կառավարու-
թեանց :
Փիլատէֆիայէն կը գրեն Թայմի
թէ, Չինացի գործակալներ Միաց-
եալ—Նահանգաց մէջ պատերազ-
մի պատրաստութեանց վերաբերող
բաներ գնելու վրայ են :
Օրօնիկ բօսիլ թղթակիցը կը-
գրէ Վիենայէն յիշեալ թերթին
թէ Ռուսիոյ և Փրանսայի մէջ տեղ
համաձայնութիւն մը գոյացած է,
Փրանսայի համար գաղթականա-
կան ընդարձակ տեղութիւն մը
հաստատուելու մտօք :
Աթէնքի համալսարանը 500 ֆը-
րանք որոշեր է Կամպէթթայի ար-
ձանին համար : Թանի մէջ կը կար-
դանք թէ արդէն 170,685 ֆրանք
հանգանակուած է մեծաւուն քա-
ղաքացիին արձան մը կանգնելու
համար :
Դիտէ ընթերցողը, որ տիկին
Բաթթի հոչակաւոր թատերգու-
հին մերթը մերթ Ամերիկա կեր-
թայ, իւրաքանչիւր ներկայացման
համար 22,000 ֆրանք ստանալով :
Այժմ տիկին Մարչէլլա Սէմպրիէ
հրաւէր ընդունած է նոր աշխար-
հէն, և պիտի մեկնի առաջիկայ
Հոկտեմբեր ամսուն, մինչև Ապրիլի
վերջը մնալու համար : Յիսուսեւթ
ներկայացումի համար 480,000 ֆը-
րանք զուտ գումար մը պիտի ըն-
դունի, առանց որ և է ծախքի
խառնուելու : Կըսուի թէ արդէն
200,000 ֆրանք պատրաստ է տի-
կին Մարչէլլա Սէմպրիէի համար
Ռոյիլտի դրամատունը :
Եգիպտական իշխանուհի Չէյնէպ
Հանըմ Պրուսացի Հայ գործաւոր-
ներէ շինուած գերեզմանի գորգ մը
գնելով վեհ. Սուլթանի ներկայէր
է : Կայսրը այնքան գոհ եղեր է
այս գորգին տեսքէն որ հրամայէր
է Պոլիս բերել տալ զայն գործող
արհեստաւորները :

